ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻՑ, ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՑ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԱՖԱՅԻՑ

Ընդունեցեք իմ շնորհավորությունները, հարգանքներն ու խորին զգացմունքը Ձեր ընտրության և օծման առթիվ: Հուզվեցինք լսելով արարողությունն ու Ձեր արժանի խոսքերը՝ Ձերդ Սրբության բարձր պաշտոնի համար: Աղոթում ենք աստվածային օգնության և քաջության համար Ձեր ծանր և սուրբ պատասխանատվության համար: Մատուցանում եմ Ձեզ և Ս. Աթոռին իմ անկեղծ հավատարմությունն ու խոնարհ նվիրվածությունը:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Երբեմնի եղբայր պատվական և այժմ օծյալ Հայրապետ Վեհափառ: Սրտագին շնորհավորանք Վեհիդ և որդիական բարեմաղթանք, արդյունաշատ և բազմաբեղուն Քահանայապետություն, ի փառս Մայր Աթոռ, ի պարծանս հայ ազգի լրության և միության միասնական Հայ Եկեղեցվո: Ազգը խորունկ գիտակցությամբ ընտրեց Լուսավորչի Դահակալը: Հինգշաբթի օր Ղալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցին, Պատրիարք Սրբազանի նախագահությամբ, անարժանաբար պիտի պատարագեմ հոգելույս Հայրապետի հոգվո երանության աղոթելու և հանուն Վեհիդ Հայրապետական առաջին մաղթանք կատարելու:

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Ձերդ Սրբության ներկայացնում եմ իմ հարգալից շնորհավորությունները՝ Ձերդ Սրբության Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու և օծվելու առթիվ, և մաղթում եմ երկար, երջանիկ և հաջողությամբ լի կյանք:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՄՀԱՃՅԱՆ

ՀԱԼԵՊԻՑ

Խնդրում եմ ընդունել իմ լավագույն ցանկությունները, մաղթանքներն ու հարգանքը՝ Մայր Աթոռի վրա Ձեր ընտրության առթիվ: Մեր աղոթքն է մեր սիրելի եկեղեցվո հաջողության և փառքի համար:

Առաջնորդ Հալեպի թեմի՝
ԶԱՐԵՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՅԱՍԼՅԱՆ

ՆԻԳՈՋԻԱՅԻՑ

Անկեղծ ու հարգալից շնորհավորություններ և մաղթանքներ Ձեր գահակալության առթիվ:

Առաջնորդ Կիպրոսի թեմի՝
ԴԵՎՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԵՊԵՏՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Սրտագին շնորհավորություններ:

Մայրդ՝
ՍԻՐԱՆՈՒՇ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ձերդ Վեհափառության հայրապետական ընտրության և գահակալության առթիվ խոնարհաբար կներկայացնենք Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի հայոց շնորհավորությունները ու սրտագին բարեմաղթությունները: Կհայտնենք մեր սերը, հավատարմությունն ու նվիրումը հանդեպ Մայր Աթոռին, և կաղոթենք առ Աստված, որ տա Ձերդ Սրբության արևշատություն, որպեսզի աստվածաշնորհ իմաստությամբ առաջնորդեք մեր ժողովուրդը ամբողջ աշխարհի, որ կնայի Միածնաէջ Մայր Աթոռին, որպես իր հավատքին և միության միջնաբերդը:

Որդիական խորին ակնածանքով՝

Առաջնորդական փոխանորդ
Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի՝
ՎԱՐԴԱՆ ՔԱՀԱՆԱ ՄԸԿԸՐՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Այսօր, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվույս դաշտահանդեսին, հազարավոր ժողովուրդ կուզանք շնորհավորել Ձերդ Ս. Օծությունը և մաղթել Ձեզ արդյունավոր երկար տարիներ:

Որդիական սիրով և հնազանդությամբ՝

Ի դիմաց Ծխական խորհրդի՝
ԱՂԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲՈՍՏՈՆԻՑ

Վեհափա՛ռ Տեր:

Ձեր Ամենայն Հայոց Կաթողիկոսության ընտրության և սուրբ օծման առթիվ, հանուն Բոստոնի Ս. Երրորդություն հայաստանյայց եկեղեցվո և համայն հայ ժողովրդյան, մեր հոգեկան հրճվանքը, սրտագին շնորհավորությունները ու մաղթանքը և որդիական հարգանքը կհայտնենք Ձերդ Վեհափառության և հավատարմություն Մայր Աթոռին: Կաղոթենք, որ Տեր Աստված Ձեզի շնորհեն երկար և առողջ կյանք և բեղմնավոր գործունեություն՝ ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցվո և Ազգիս Հայոց:

Ծխական խորհրդի
Նախագահ՝ ԲԱԲԿԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՔՍՈՒՏՅԱՆ
Ատենապետ՝ ՀՄԱՅԱԿ ՀԱՊԵՇՅԱՆ
Ատենադպիր՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱՀԻԿՅԱՆ

ԼՈՍ-ԱՆՋԵԼՈՍԻՑ

Աստվածարյալ Ս. Հայրապետ:

Ես և ժողովուրդս կհայտնենք մեր սրտագին գոհունակությունը Սրբության գահակալությամբ Ս. Լուսավորչի Գահում: Բարին Աստված անսասան պահե մեր Մայր Աթոռը իր արժանընտիր Գահակալով և խորհրդային մեր Հայրենիքը՝ իր իմաստուն ղեկավարներով, և խորհրդային Հայրենիքի և Սփյուռքի համայն հայությունը՝ Մայր Աթոռո Հովվապետով համայր ամոք: Երկրպագություն Գահույքիցդ, համբույրներ Ս. Աջույդ:

Խոնարհաբար՝

ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ՇԱՀԻՆՅԱՆ
ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀՈՏՆ ՅՈՒՐ

ՔԵՄԲՐԻՋԻՑ (Մասաչուսեց, ԱՄՆ)

Վ ե հ ա փ ա՛ ռ Տեր:

Որդիական հարգանոք մատչիմք համբուրել Ձեր Ս. Աջը և հաղորդենք Ուոթերտաունի Ս. Հակոբ հայ եկեղեցվո հավատացյալներու շնորհավորությունը Ձեր ընտրության և օծման առթիվ: Աստված անսասան պահե Մայր Աթոռը և պարգևե Ձեզ արևշատություն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ԱՇՃՅԱՆ
ԵՎ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Հանուն մեր եկեղեցական խորհրդի, մեր ճեմարանի և Կալկաթայի հայկական համայնքի, Նորին Սրբության ներկայացնում ենք մեր ջերմ և անկեղծ շնորհավորությունները՝ Նրա ընտրության առթիվ որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց: Թող նա երկար ապրի՝ ղեկավարելու համար մեր եկեղեցու նախատագիրը:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՅԱՖԱՅԻՑ

Իսրայելի հայկական գաղութի կողմից ցանկանում ենք հղել Ձերդ Սրբության ամենաանկեղծ շնորհավորություններ, նվիրվածություն և ամենախորունկ հարգանքներ՝ աշխարհում բոլոր հայերին սիրելի Ս. Էջմիածնի Ս. Գահի վրա Ձեր ընտրության և օծման ուրախալի առթիվ:

Հոգևոր հովիվ Յաֆայի հայոց՝
ԲԱԲԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՊԱՏՅԱՆ

ՀԱՅՖԱՅԻՑ

Ես և Հայֆայի իմ համայնքը շնորհավորում ենք Ձեզ Ձեր ընտրության առթիվ:

Հայֆայի հայ եկեղեցու հովիվ՝
ՇԱՀԱՆ ԱԲԵՂԱ ՍԸՎԱՃՅԱՆ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Հանուն Կալիֆորնիո հայության և Ազգային կեդրոնական վարչության և հոգևորական դասին կշնորհավորենք Ձեր Ս. Օծությունը և կմաղթենք երկար, առողջ և բազմարդյուն կյանք:

Առաջնորդական փոխանորդ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ՐԵԹՂԵՀԵՄԻՑ

Միաբանության և ժողովուրդի կողմեն մեր սրտագին աղոթքը և շնորհավորությունը Ձեր Ս. Վեհափառության օծումին առթիվ:

Բեթղեհեմի (Հորդանան) հայոց վանքի մեծավոր՝
ՏԵՐ ՄԵՍՐՈՊ

ՓԱՐԻԶԻՑ

Ջերմագին շնորհավորություններ: Հայտնում ենք մեր հրճվանքը: Մաղթում ենք քաջառողջություն և Հայ եկեղեցուն՝ բարգավաճություն:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԴԱՄԱՍԿՈՍԻՑ

Ներկայացնում ենք մեր սրտագին շնորհավորությունները Ձեր կաթողիկոսական գահակալության առթիվ: Ցանկանում ենք Ձեզ երկար կյանք, բարություն, միասնականություն և միություն Հայ եկեղեցուն:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԵՄԻ

ԴԱՄԱՍԿՈՍԻՑ

Ձեզ ներկայացնում ենք մեր որդիական հրճվանքի արտահայտությունը Ձեր Սրբության Կաթողիկոսական Գահին բազմելու առթիվ:

Դամասկոսի հայոց եկեղեցու
Վարչական խորհրդի քարտուղար՝
ԼԵՎՈՆ ԷՄԵՔՃՅԱՆ

ՄԱՆՉԵՍՏՐԻՑ

Շնորհակալություն Ձեր հեռագրի համար, որ մեզ տեղեկացնում է Վազգեն եպիսկոպոս Պալճյանի ընտրությունը որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց: Այդ պատճառեց մեզ մեծ հաճույք: Թող Ամենակարողը շնորհեն հրաշ առողջություն և ուժ: Խնդրվում է հաղորդել Նորին Սրբության հայկական համայնքի շնորհավորությունները:

ՄԱՆՉԵՍՏՐԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Արժանտինի հայ համայնքի կեդրոնական վարչական խորհուրդի և եկեղեցական դասուն կողմե սրտագին մաղթանքներով կշնորհավորենք Ձեր ընտրությունը և կնայցենք աստվածային օգնություն:

ՆՈՐԱՅՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ ԽՈՐԵՆՅԱՆ

ՄԻԼԱՆՈՅԻՑ

Միլանոյի հայ եկեղեցվո հոգաբարձությունը և Գաղութային վարչությունը, շնորհավորելով նորընտիր Վեհափառ Կաթողիկոսը, կնայտնեն իրենց հավատարմական զգացումները:

ԵՐՎԱՆԴ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ԴԵՊԵՍՏՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆԻՑ

Սրտագին շնորհավորելով Ձերդ Վեհափառության օծման և Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռ բարձրանալու առթիվ, ցանկանում ենք Ձեզ երկար և բաջառողջ կյանք, փայլուն հաջողություններ՝ ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցու և հոգուտ խաղաղության ամրապնդման ամբողջ աշխարհում: Մեր Տիրոջ օրհնությունը թո՛ղ հավետ լինի Ձերդ Վեհափառության հետ:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆԻՑ

Ս. Հովհաննես եկեղեցու հոգևորականությունը և ժողովուրդը շնորհավորում են Ձեր սուրբ օծումը:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

ԲԱՔՎԻՑ

Թբիլիսի հայ հավատացյալները և թեմական խորհուրդը հոգով շնորհավորում են Ձերդ Վեհափառությանը՝ հայ ժողովրդի արժանավոր զավակին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Անկեղծորեն ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկար տարիների կյանք՝ ի բարորություն Հայ Եկեղեցու:

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԱՔՎԻՑ

Մենք, Թբիլիսի հայոց եկեղեցու քահանաները, ամբողջ հոգով շնորհավորում ենք Ձեզ՝ հայ ժողովրդի արժանի զավակին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ և ցանկանում ենք Ձեզ անսպառ եռանդ և առողջություն՝ ի բարորություն Հայ Եկեղեցու:

Բաքվի հայոց եկեղեցու քահանաներ՝
ՏԵՐ ԳՐԻԳՈՐ ԵՎ ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼ

ՌՈՍՏՈՎԻՑ

Շնորհավորում եմ Ձեզ, ցանկանում եմ առողջություն, երկար տարիների կյանք և բեղմնավոր գործունեություն՝ ի փառս Եկեղեցու և ի բարորություն ժողովրդի:

Տ. ՄԿՐՏԻՉ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԶՈՐՁՈՓՅԱՆ

ՌՈՍՏՈՎԻՑ

Շատ ուրախ ենք Ձեր Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Ցանկանում ենք առողջություն, երկար տարիների կյանք և բեղմնավոր աշխատանք՝ ի բարորություն հայ ժողովրդի:

Ռոստովի հայոց գերեզմանատան եկեղեցու ավագ քահանա՝
ԽԻՐԽԻՐՅԱՆ
ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՌՈՍՏՈՎԻՑ

Շնորհավորում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծումը:

ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԻՐՈՎԱԲԱԴԻՑ

Կիրովաբադի հայ եղեկեցու հոգևորականությունն ու հավատացյալ համայնքը շնորհավորում են Ձերդ Վեհափառության գահակալության առթիվ և ցանկանում Ձեզ երկար կյանք՝ ի բարօրություն հայ ժողովրդի:

ԿԻՐՈՎԱԲԱԴԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՀԱՄԱՅՆՔ

ԲՈՒԴՅՈՆՈՎՍԿԻՑ

Բուդյոնովսկի հավատացյալ հայ համայնքը, եկեղեցական խորհուրդը և հոգևորականությունը ողջունում են Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոսի ընտրությունն ու նորին Վեհափառության սուրբ օծումը:

ԲՈՒԴՅՈՆՈՎՍԿԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՀԱՄԱՅՆՔ

ՂԶԼԱՐԻՑ

Ղզլարի հայոց եկեղեցու Տ. Հակոբ քահանան և եղեղեցական խորհուրդը շնորհավորում են նորընտիր Կաթողիկոսին: Ցանկանում ենք լավագույն հաջողություններ և երկար կյանք:

ՏԵՐ ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ
ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՁԱԼԴՐԻՑ

Եկեղեցական խորհուրդը, հավատացյալները և անձամբ ես հոգով ուրախ ենք՝ Ձեր Ամենայն Հայոց Կոթողիկոսի մեծագույն պարտականությունների ընդունման համար: Մշտապես պիտի աղոթենք Ձեր բանկացին առողջության և բարեհաջող գործունեության համար՝ ի բարօրություն եկեղեցու, Հայրենիքի, ժողովրդի և համայն մարդկության:

Ձալգրի հայոց եկեղեցու քահանա՝
Տ. ՍԱՐԳԻՍ ԲԱՐԱՇՅԱՆ

ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻՑ

Անսահման ուրախ ենք Ձեր ընտրության առթիվ, որդիական ակնածանքով ողջունում ենք Ձերդ Սրբության Լուսավորչի Գահ բարձրանալը: Ամբողջ սրտով ջերմ աղոթքներ ենք վերառաքում Ձեր առողջության և երկար կյանքի, Մայր Աթոռի բարօրության և ծաղկման համար:

ԱՎԵՏԻՔ ՔԱՀԱՆԱ ԹԱՎԱՐԵԿՅԱՆ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՀԱՄԱՅՆՔ

ԹԲԻԼԻՍԻՑ

Շնորհավորում ենք նորընտիր Կաթողիկոս Վազգեն Ա.ին, ցանկանում ենք երկար կյանք:

Տ. ՄԻՔԱՅԵԼ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ,
Տ. ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԻԼԽԱՋՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻՑ

Փառաբանելով Տիրոջը, շնորհավորում ենք Ձեզ Վեհափառության ընտրությունը Գրիգոր Լուսավորչի Աթոռի վրա:

Կույսեր՝
ԳՈՆԻՆՅԱՆ, ԳՈՒՆՈՒԼՅԱՆ, ՎԵՐՄԻՇՅԱՆ

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Մեր ամբողջ հավատացյալ եղբայրների հետ շնորհավորում ենք Ձեր՝ մեր Հոր Գրիգոր Լուսավորչի Գահը բարձրանալը: Ցանկանում ենք Ձեզ Վեհափառությանը առողջություն և երկար կյանք՝ մեր եկեղեցու ծաղկման և հավատացյալների մխիթարության համար:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ
ԵՎ ԾԽԱՏԵՐ ՔԱՀԱՆԱ

ԱՐՄԱՎԻՐԻՑ

Ինչպես երբեմն Բեթղեհեմի հովիվները հանդիսավորապես առաջնորդվելով հասան Բեթղեհեմ, զարմանալով և ուրախանալով միասին երկրպագեցին աշխարհի Փրկչին, այնպես էլ մենք՝ խոնարհ հովիվներս և Ձեր քրիստոնյա հոտը, Կաթողիկոսի հանդիսավոր ընտրության և օծման առթիվ ողջունում ենք և շնորհավորում Ձեզ Սրբությանը: Մենք ևս Ձեզ հետ ենք և ուրախանում ենք՝ բարի ավետիքով: Ցանկանում ենք Ձեզ կյանքի երկար տարիներ և առողջություն՝ ի բարորություն և ի ծաղկումն Հայ Եկեղեցու, Ձեր իմաստուն ղեկավարությամբ: Հանուն Ս. Երրորդության հանույքով ընդունում ենք Ձեզ Սրբության աղոթքները:

Արմավիրի հայ համայնքի անունից
ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ԱՆԱՆՅԱՆ

ՕՐՋՈՆԻԿԻԶԵԻՑ

Շնորհավորում եմ Ձեզ Սրբության Ս. Գրիգոր Լուսավորչի փառավոր Գահ բարձրանալը: Հոգու խորքից ցանկանում եմ առողջություն և երկար տարիների բեղմնավոր կյանք՝ Մայր Աթոռի ծաղկման և բարորության համար:

Օրջոնիկիձեի հայոց եկեղեցական խորհրդի նախագահ՝
ԲԵԿԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Անկեղծ շնորհավորում եմ Ձեր ընտրությունը: Ցանկանում եմ երկար կյանք, առողջություն, հաջողություն, որ կարողանաք դարավոր հիմնարկությունը՝ Ս. Էջմիածինը բարձրացնել պատշաճ բարձրության ի փառս Հայրենիքի, ժողովրդի և եկեղեցու:

ՍՏԵՓԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Ուրախությամբ շնորհավորում եմ Վեհիդ նոր գահակալությունը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱՋՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Վեհափառ Տե՛ր:

Որդիական խորին հարգանքով շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության բարեբաստիկ ընտրությունը: Լի հավատքով սպասում ենք տեսնել Վեհիդ ազգանվեր գործունեությունը՝ ի փառս Հայաստանյայց Ս. եկեղեցվո և համայն հայության:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ԹԱՎՐԻԶԻՑ

Ողջունում ենք Ձերդ Ս. Օծության ընտրությունը և Հայրապետական Աթոռի սև հողի վերացումը: Խորը բերկրանքով մատչիմ ի համբույր նորաօծ Աջույդ և մաղթում ենք Բարձրյալից պահել Ձերդ Ս. Օծության Հայրապետական Աթոռի վրա համերաշխ ընդ երկայն առուս:

Ատրպատականի առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՊԱՀԱՆԻՑ

Խոնարհաբար խնդրում ենք ընդունել մեր որդիական շնորհավորությունները:

ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ՔԱՀԱՆԱՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ռումանահայ թեմական խորհուրդը խանդավառված, որ Ս. Էջմիածնի դարավոր Աթոռը իր արժանընտիր Գահակալը կունենա հանձին Ձերդ Սրբության, միշտ վառ պահելու Լուսավորչի կանթեղը, սրտագին կմաղթե, որ Ամենակալը ուժ և կորով պարգևե, ի կատար հանելու այս ծանր և պատասխանատու պաշտոնը ի փառս Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո և Ս. Էջմիածնի անսասանության: Այն ջերմ հավատքը կտածենք, որ Ձեզմե բաժնվելե հետո ալ անպակաս պիտի ընեմ Ձեր հայրական գուրգուրանքը և հոգածությունը:

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՍՈՖԻԱՅԻՑ

Հանուն Բուլղարահայ թեմի հավատացյալներու ընդունեցեք խանդավառ շնորհավորություններ Ձեր Վեհափառության պատվավոր ընտրության առթիվ, նաև բաջառողջության և արեշատության որդիական լավագույն մաղթանքներ:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՍՏՈՆԻՑ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Աթոռին Ձեր գահակալության առթիվ մենք ճղում ենք մեր լավագույն մաղթանքները և հույս ունենք, որ Ձերդ Սրբությունը գերազույն նիգ պիտի անի՝ վերահաստատելու համար նորմալ դրություն Ամերիկայի Հայաստանյայց Առաքելական եկեղեցում:

Ամերիկահայ Ազգային Եկեղեցու
Առաջնորդարանի գործադիր հանձնախմբի
Նախագահ՝ ԱՐՍԵՆ ՔԱՀԱՆԱ ՍԻՄԵՈՆՅԱՆՑ
Ատենապետ՝ ԱՐԱՄ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Քարտուղար՝ ՀԱՅԿԱԶ ՂԱԶԱՐՅԱՆ
Գանձապահ՝ ԵՂԻՇԵ ՄԵԼԻՔՅԱՆ

ՍՈՖԻԱՅԻՑ

Սոֆիայի եկեղեցու վարչական խորհրդի և հայ հավատացյալ համայնքի անունից հարգալից կերպով Ձեզ ներկայացնում ենք ջերմագին շնորհավորություններ Ձեր Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ և Ձեզ մաղթում ենք ուժ և երկար կյանք՝ Հայոց Եկեղեցու մեծագույն ծառայության համար:

Սոֆիայի հայոց եկեղեցական խորհրդի
Նախագահ՝ ԵՐԻՑՅԱՆ
Քարտուղար՝ ՊԱԼՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Բուխարեստի հայոց եկեղեցու քահանայից դասը կշնորհավորե Ձերդ Վեհությունը և կաղաչեմաղթե Ձեզ ուժ և կորով՝ հովվելու Հայաստանյայց Ս. Եկեղեցին՝ ի փառս նրա և մեր Հայրենիքի:

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ԲՈՒՐԳԱԶԻՑ

Բուրգազի եկեղեցվո վարչությունը, հավատացյալ ժողովուրդը և ես շնորհավորում ենք Ձերդ Սրբության կաթողիկոսական օծումը, մաղթում ենք Ձերդ Վեհափառության բեղմնավոր գործունեություն, առաջնորդություն, կամք և համբերություն՝ երջանկությամբ հովվելու հավատացյալ ժողովուրդը և Եկեղեցին: Աստված անսասան պահե Հայաստանյայց Ս. Եկեղեցին և նրա արժանընտիր Դահակալը՝ ի պարծանս հայ Ազգի և վերածնած մեր Հայրենիքի:

Բուրգազի հայոց եկեղեցական վարչության ատենապետ՝
ՄԵՍՐՈՊ ԵՆԿԻՊԱՐՅԱՆ

ՊԼՈՎԴԻՎԻՑ

Կշնորհավորեմ ի սրտե երջանկություն պատճառող և արժանավոր Ձեր ընտրությունը, լավագույն մաղթանքներով երկար պաշտոնավարության և ծառայության՝ ազգի և խաղաղության համար:

Պլովդիվի հայ համայնքի նախագահ՝
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲԱԶԱՐՋԸԳԻՑ

Բազարջըգի հավատացյալներու կողմե և եկեղեցական վարչության կողմե ուղիղական շնորհավորանքներ: Ձեր հայրական օրհնությունը կխնդրենք հայության համար:

Բազարջըգի հայոց եկեղեցական վարչության ատենապետ՝
ՄԵՍՐՈՊՅԱՆ

ԲՐԱՅԻԼԱՅԻՑ

Հանուն Բրայիլայի հավատացյալներուն, հանեցեք ընդունիլ մեր սրտագին շնորհավորությունները՝ Լուսավորչի Դահուն արժանավոր հաջորդ ընտրված լինելնուդ առթիվ:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԲՐԱՅԻԼԱՅԻ

ԿՈՆՍՏԱՆՑԱՅԻՑ

Հանուն Կոնստանցայի գաղութին, որդիական մեր ամենաանկեղծ շնորհավորանքը՝ Ձերդ Սրբության Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրության առթիվ:

Թաղական խորհուրդ Կոնստանցայի հայոց՝
ՊԱՐՍԱՄՅԱՆ,
ՏԻՃՅԱՆ

ԿՈՆՍՏԱՆՑԱՅԻՑ

Վեհափառ Տե՛ր:
Ձեր ընտրության փառք ու պատիվ,
Դալար մնամ հոտ ու հովիվ:

Հոգևոր հովվությունն Կոնստանցայի հայոց՝
ՊԵՏԻԿՅԱՆ ԵՎ ՊԱՐՈՆՅԱՆ

ՀԱՍԿՈՎՈՅԻՑ

Ընդունեցեք ջերմագին շնորհավորություններ Հասկովոյի հայկական համայնքի և իմ անունից՝ հոգևոր Գերագույն Պետի Ձեր ընտրության առթիվ:

Հասկովոյի հայոց եկեղեցական վարչության նախագահ՝
ՀՄԱՅԱԿ ՆՈՐՍԻԿՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ի սրտե կշնորհավորենք Ձերդ Վեհափառության ընտրությունը որպես Հայրապետ Ամենայն Հայոց: Կցանկանք Ձեզ երկար կյանք և բեղմնավոր գահակալություն: Վստահ ենք, որ Դուք, որպես արժանավոր հաջորդ Մեծն Գեորգ Զ.ի, պիտի շարունակեք Անոր պայծառ ուղին՝ հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո միասնականության, էջմիածնի հեղինակության, տեվականացման, համայն հայ ժողովուրդի բարօրության և աշխարհի խաղաղության:

Ի դիմաց Ամերիկահայ հառաջդիմական միության
Կեդրոնական վարչության՝
Գանձապետ՝ ԱՐՄԵՆ ՄԻՐԻՃԱՆՅԱՆ
Հնգեանուր քարտուղար՝ ՕՍՍԵՆ ՍԱՐՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ձերդ Վեհափառության կաթողիկոսական ընտրության և գահակալության առթիվ, ի դիմաց «Վրաբեր» թերթի խմբագրության և վարչության, կհայտնենք մեր սրտագին շնորհավորությունները և նորընտիր Հայրապետիդ կցանկանք բաջառողջ կյանք և արդյունավետ գործունեություն՝ ի փառս Հայաստանյայց Առաքելական դարավոր Եկեղեցվո, հայ ժողովուրդի և Հայրենիքի, և հօգուտ աշխարհի խաղաղության:

ՄԱՐՏԻԿ Թ.
ԱՐԱՄ ՄԻՐԻՃԱՆՅԱՆ

(Շարունակելի)